

ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԵՐՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՄԻՏԵ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՄԱՍԻՆ
(AETR)

ԵՎ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

կատարված է Ժնևում 1970թ. հուլիսի 1-ին



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(AETR)

Պայմանավորվող կողմերը.

Ցանկանալով աջակցել ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և բեռների միջազգային փոխադրումների զարգացմանը և կատարելագործմանը,

Համոզված լինելով ճանապարհային երթևեկության անվտանգությունն ուժեղացնելու, միջազգային ճանապարհային տրանսպորտում աշխատանքի որոշակի պայմաններ կարգավորող կանոնները Աշխատանքի միջազգային կազմակերպության սկզբունքներին համապատասխանեցնելու և այդ կանոնների պահպանումն ապահովելու համար համատեղ որոշակի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մեջ,

Համաձայնվեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Սահմանումներ

Համաձայնագրի նպատակների համար.

ա) «տրանսպորտային միջոց» հասկացությունը նշանակում է շարժիչով տրանսպորտային միջոց կամ կցորդ. այս հասկացության մեջ ընդգրկվում է տրանսպորտային միջոցի ցանկացած միավորում.

բ) «շարժիչով տրանսպորտային միջոց» հասկացությունը նշանակում է ցանկացած ինքնագնաց ճանապարհատրանսպորտային միջոց, որը սովորաբար օգտագործվում է ուղևորներ և բեռներ փոխադրելու կամ ուղևորներ և բեռներ փոխադրելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները քարշակելու համար. այս հասկացության մեջ ընդգրկված չեն գյուղանտեսական նպատակներով օգտագործվող տրակտորները.

գ) «կցորդ» հասկացությունը նշանակում է ցանկացած տրանսպորտային միջոց՝ նախագծված այնպես, որ քարշակվի շարժիչով տրանսպորտային միջոցով, և ներառում է նաև կիսակցորդները.

դ) «կիսակցորդ» հասկացությունը նշանակում է ցանկացած կցորդ, որը նախատեսված է շարժիչով տրանսպորտային միջոցին կցելու համար, ընդ որում այնպիսի եղանակով, որ դրա մի մասը մնա տրանսպորտային միջոցի վրա, և դրա քաշի, ինչպես նաև բեռնված բեռի զգալի մասի փոխադրման ծանրությունն ընկնի տրանսպորտային միջոցի վրա.

ե) «տրանսպորտային միջոցների համակցություն» հասկացությունը նշանակում է կցված տրանսպորտային միջոցներ, որոնք՝ որպես մեկ ամբողջություն, երթևեկում են ճանապարհով.

զ) «թույլատրելի առավելագույն քաշ» հասկացությունը նշանակում է տվյալ պետությունում տրանսպորտային միջոցը գրանցող իրավասու մարմնի կողմից բարձրված տրանսպորտային միջոցի թույլատրելի հռչակված առավելագույն քաշը:

է) «ճանապարհով փոխադրում» հասկացությունը նշանակում է ուղևորների և բեռների փոխադրման համար օգտագործվող հասարակական տրանսպորտային միջոցների ցանկացած ուղևորություն ազատ ճանապարհներով, լինի դա բարձրված վիճակում, թե ոչ.

ը) «միջազգային ճանապարհային փոխադրում» հասկացությունը նշանակում է ճանապարհային փոխադրում, որի ընթացքում կատարվում է առնվազն մեկ սահմանի հատում.

թ) «կանոնավոր ծառայություններ» հասկացությունը նշանակում է ծառայություններ, որոնք նախատեսում են որոշակի երթուղով որոշակի ժամանակամիջոցում ուղևորների փոխադրում, նախապես սահմանված կանգառներում ուղևորների նստեցում և իջեցում:

Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից հաստատված և մինչև շրջանառությունը փոխադրողի կողմից գործադրված ծառայությունների և փաստաթղթերի շրջանառությունը կանոնակարգող նորմերը կսահմանեն փոխադրման պայմանները և, մասնավորապես, ծառայությունների հաճախությունը, ժամանակացույցը, սակագները և ուղևորներին փոխադրելու պարտականությունը, երբ այդ պայմանները սահմանափակված չեն որևէ այլ օրենքով կամ նորմերով:

Որևէ մեկի կողմից կազմակերպված ծառայությունները, որոնք, բացառությամբ այլ ուղևորների, նախատեսում են որոշակի ուղևորների փոխադրում և իրականացվում են այս հասկացության առաջին ենթակետում սահմանված պայմաններով, համարվում են կանոնավոր ծառայություններ: Նման ծառայությունները, որոնք, մասնավորապես, նախատեսում են աշխատավորների փոխադրում իրենց աշխատավայր կամ աշխատավայրից կամ դպրոցականների փոխադրում դպրոց կամ դպրոցից, այսուհետ կանվանվեն «հատուկ կանոնավոր ծառայություններ»:

ժ) «վարորդ» հասկացությունը նշանակում է ցանկացած անձ, լինի նա վարձու աշխատող, թե ոչ, որը վարում է տրանսպորտային միջոցը թեկուզ կարճ ժամանակով կամ որը գտնվում է տրանսպորտային միջոցում, որպեսզի անհրաժեշտության դեպքում վարի մեքենան:

ի) «անձնակազմի անդամ» հասկացությունը նշանակում է վարորդ կամ հետևյալ անձանցից մեկը, լինի նա վարձու աշխատող, թե ոչ.

- վարորդի ամուսինը, այսինքն ցանկացած անձ, որն ուղեկցում է վարորդին որոշակի խուսանավումների ժամանակ վերջինիս աջակցելու և սովորական պայմաններում տրանսպորտային գործողություններում արդյունավետ մասնակցություն ցուցաբերելու համար, եթե անգամ սույն հոդվածի ժ) կետի սահմանման համաձայն նա վարորդ չէ.

- վագոնավարը, այսինքն ցանկացած անձ, որն ուղեկցում է ուղևորներ փոխադրող վարորդին և պատասխանատու է, մասնավորապես, ուղևորներին երթևեկելու իրավունք տվող ուղետոմսերի և այլ փաստաթղթերի ստուգման համար,

լ) «շաբաթ» հասկացությունը նշանակում է երկուշաբթի ժ. 00.00-ից մինչև կիրակի ժ. 24.00-ն ընկած ժամանակահատվածը.

խ) «հանգիստ» հասկացությունը նշանակում է անընդմեջ մեկ ժամ ժամանակահատված, որը վարորդը կարող է ազատ տնօրինել:

Հոդված 2

Գործունեության ոլորտը

1. Սույն համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող կողմի տարածքում գրանցված ցանկացած ավտոտրանսպորտային միջոցով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում իրականացվող միջազգային ճանապարհային փոխադրումների նկատմամբ:

2. Այնուամենայնիվ,

ա) եթե միջազգային ճանապարհային տրանսպորտային գործողություններին մասնակցող անձնակազմի մեկ կամ ավելի անդամներ չեն հեռանում այն պետության տարածքից, որտեղ սովորաբար իրականացնում են իրենց մասնագիտական գործունեությունը, այդ տարածքի Պայմանավորվող կողմը կարող է նրա կամ նրանց նկատմամբ չկիրառել սույն Համաձայնագրի դրույթները;

բ) քանի դեռ այն Պայմանավորվող կողմը, որի տարածքն օգտագործվում է, չտա իր համաձայնությունը, սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվի այն միջազգային ճանապարհային փոխադրումների նկատմամբ, որոնք կատարվում են`

1. բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, որոնց թույլատրելի առավելագույն քաշը, ներառյալ կցորդը և կիսակցորդը, չի գերազանցում 3.5 տոննան,
2. ուղևորների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, որոնք իրենց կառուցման և սարքավորումների առանձնահատկությամբ առավել հարմարավետ են իննից ոչ ավելի ուղևորների (ներառյալ վարորդին) փոխադրման համար և նախատեսված են այդ նպատակի համար,
3. կանոնավոր ծառայություններ մատուցող, ուղևորների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, երբ այն երթուղին, որով մատուցվում է ծառայությունը, չի գերազանցում 50 կմ-ը,
4. տրանսպորտային միջոցներով, որոնց թույլատրելի առավելագույն արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ-ը,
5. զինված ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության, հրշեջ ծառայությունների և հասարակական կարգի պահպանման համար պատասխանատու ուժերի կողմից կամ նրանց հսկողությամբ օգտագործվող տրանսպորտային միջոցներով,
6. կոյուղու, ջրհեղեղի պաշտպանության, ջրի, գազի և էլեկտրականության ծառայությունների, մայրուղիների պահպանման և հսկողության, աղբի հավաքման և տեղափոխման, հեռագրային և հեռախոսային

- ծառայությունների, փոստային իրերի փոխադրման, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման և ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդիչների և ընդունիչների հայտնաբերման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցներով,
7. շտապօգնության և փրկարարական նպատակներով օգտագործվող տրանսպորտային միջոցներով,
 8. բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտական տրանսպորտային միջոցներով,
 9. կրկեսի և զվարճանքի պարագաներ փոխադրող տրանսպորտային միջոցներով
 10. մասնագիտական վթարային տրանսպորտային միջոցներով,
 11. տեխնիկական զարգացման համար, վերանորոգման և պահպանման նպատակներով ճանապարհային փորձարկումներ կատարող տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև նոր կամ վերակառուցված այն տրանսպորտային միջոցներով, որոնք դեռևս շահագործման չեն հանձնվել,
 12. ոչ առևտրային նպատակներով անձնական օգտագործման բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով.
 13. գյուղացիական տնտեսություններից կաթի հավաքման համար, ինչպես նաև անասունների կերի համար կաթի բեռնարկղերը և կաթնամթերքները գյուղացիական տնտեսություններ վերադարձնելու նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցներով:

Հոդված 3

Համաձայնագրի որոշ դրույթների կիրառումը Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետությունների տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով իրականացվող ճանապարհային փոխադրումների նկատմամբ

1. Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով իրականացվող ճանապարհային փոխադրումների նկատմամբ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում կկիրառի ոչ պակաս, քան սույն Համաձայնագրի 5, 6, 7, 8, 9 և 10-րդ հոդվածներով նախատեսված պայմաններ:

2. Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցի պարագայում յուրաքանչյուր

Պայմանավորվող կողմ իրավասու է պարզապես հսկողության միջոցի փոխարեն պահանջել հետևել սույն Համաձայնագրի հավելվածի տեխնիկական պայմաններին, վարորդի կողմից կատարված օրական գրառումներին:

Հոդված 4

Ընդհանուր սկզբունքներ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է կիրառել 5-8-րդ (ներառյալ) հոդվածներով նախատեսված նվազագույնից ավելի կամ առավելագույնից ցածր պայմաններ: Այնուամենայնիվ սույն Համաձայնագրի դրույթները կիրառելի կլինեն այլ պայմանավորվող կողմի կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով միջազգային ճանապարհային փոխադրումներ իրականացնող վարորդների համար:

Հոդված 5

Անձնակազմ

1. Միջազգային ճանապարհային փոխադրումներ իրականացնող վարորդների համար նվազագույն տարիքը պետք է լինի.

ա) 7.5 տոննայից ոչ ավելի առավելագույն թույլատրելի քաշ ունեցող տրանսպորտային միջոցների համար, ներառյալ, համապատասխան դեպքերում, կցորդը և կիսակցորդը - 18 տարեկան;

բ) այլ տրանսպորտային միջոցների համար.

21 տարեկան կամ

18 տարեկան, պայմանով, որ այդ անձն ունենա Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ճանաչված մասնագիտական գիտելիքների վկայական, որով հաստատվի, որ տվյալ վարորդն ավարտել է ճանապարհներով բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների վարորդների ուսումնական դասընթացները: Պայմանավորվող կողմերը կտեղեկացնեն միմյանց միջազգային ճանապարհային փոխադրումներ իրականացնող վարորդների համար նախապատվելի ազգային նվազագույն ուսումնական մակարդակների և այլ օժանդակ պայմանների մասին:

2. Ուղևորափոխադրումներ իրականացնող ցանկացած վարորդի 21 տարին պետք է լրացած լինի:

Տրանսպորտային միջոցի նորմալ կայանատեղից մինչև 50 կմ շառավիղով զբոսանքի նպատակով ուղևորափոխադրումներ իրականացնող ցանկացած վարորդ պետք է բավարարի նաև հետևյալ պահանջներից մեկին.

ա) նա պետք է առնվազն մեկ տարի աշխատած լինի բեռների փոխադրման ոլորտում որպես տրանսպորտային միջոցի վարորդ, որի թույլատրելի առավելագույն քաշը չի գերազանցում 3.5 տոննան.

բ) նա պետք է առնվազն մեկ տարի աշխատած լինի որպես տրանսպորտային միջոցի վարորդ, որն օգտագործվել է նորմալ կայանատեղից մինչև 50 կմ շառավիղով զբոսանքի նպատակով ուղևորափոխադրումներ իրականացնելու համար, կամ ուղևորներին սույն Համաձայնագրի կարգավորման ոլորտից դուրս այլ ծառայություններ մատուցելու համար, պայմանով, որ իրավասու մարմինը համարի, որ դրանով նա բավական փորձ է ձեռք բերել.

գ) նա պետք է ունենա Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ճանաչված մասնագիտական գիտելիքների վկայական, որով հաստատվի, որ այդ վարորդն ավարտել է ճանապարհներով ուղևորների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների վարորդների ուսումնական դասընթացները:

Հոդված 6

Վարելու ժամանակաշրջանը

1. Հանգստի երկու ժամանակահատվածների միջև կամ օրական հանգստի և շաբաթական հանգստի միջև ավտոմեքենան վարելու ժամանակը (այսուհետ՝ «օրական ավտոմեքենան վարելու ժամանակը») չպետք է գերազանցի ինը ժամը: Այն կարող է շաբաթը երկու անգամ երկարացվել մինչև տաս ժամ:

Վարորդը պետք է ոչ ավելի, քան վեց օր անընդմեջ մեքենան վարելուց հետո 8 (3)-րդ հոդվածով նախատեսված կարգով շաբաթական հանգիստ վերցնի:

Շաբաթական հանգստից օգտվելը կարող է երկարաձգվել մինչև վեցերորդ օրվա ավարտը, եթե վեց օրվա ընթացքում մեքենան վարելու ընդհանուր

ժամանակամիջոցը չի գերազանցում մեքենան վարելու վեց օրվա առավելագույն ժամանակամիջոցը :

Կանոնավոր ծառայություններից տարբերվող միջազգային ուղևորափոխադրումների դեպքում երկրորդ և երրորդ ենթակետերում «վեց» և «վեցերորդ» բառերը կփոխարինվեն համապատասխանաբար «տասներկու» և «տասներկուերորդ» բառերով:

2. Մեքենան վարելու ընդհանուր ժամանակամիջոցը ցանկացած երկու շաբաթվա ընթացքում չպետք է գերազանցի իննսուն ժամը:

Հոդված 7

Ընդմիջում

1. Չորսուկես ժամ մեքենան վարելուց հետո վարորդը պարտադիր առնվազն քառասունհինգ րոպեանոց ընդմիջում պետք է անի, եթե նա չի օգտագործում հանգստի ժամակահատվածը:

2. Այդ ընդմիջումը կարող է փոխարինվել տասնհինգ րոպեանոց ընդմիջումներով՝ բաշխելով մեքենան վարելու օրական ժամանակի վրա կամ անմիջապես այդ ժամանակաշրջանից հետո՝ պահպանելով առաջին կետի դրույթները:

3. Այդ ընդմիջումների ընթացքում վարորդը կարող է այլ աշխատանք չկատարել: Սույն հոդվածի պահանջներով, սպասելու ժամանակը և մեքենան վարելուն չնվիրված ժամանակը, որն անցկացվում է ընթացքում գտնվող փոխադրամիջոցում, լաստանավում կամ գնացքում, չպետք է դիտվի «այլ աշխատանք»:

4. Սույն հոդվածում նշված ընդմիջումները չեն կարող դիտվել ամենօրյա հանգստի ժամանակահատվածներ:

Հոդված 8

Հանգստի ժամանակահատվածներ

1. Յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում վարորդը պետք է առնվազն 11 իրարահաջորդ ժամ ամենօրյա հանգիստ ունենա, որը կարող է նվազեցվել առնվազն ինը իրարահաջորդ ժամվա՝ մեկ շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան երեք անգամ, պայմանով, որ մինչև հաջորդ շաբաթվա վերջը որպես

փոխհատուցում նրան պետք է հանգստի համապատասխան ժամանակահատված հատկացվի:

Այն օրերին, երբ, համաձայն առաջին ենթակետի, հանգիստը չի նվազեցվում, այն կարող է վերցվել երկու կամ երեք առանձին ժամանակահատվածներում՝ քսանչորս ժամվա ընթացքում, որոնցից մեկը պետք է լինի առնվազն ութ իրարահաջորդ ժամ: Այս դեպքում հանգստի նվազագույն տևողությունը պետք է երկարացվի մինչև տասներկու ժամ:

2. Յուրաքանչյուր երեսուն ժամվա ժամանակահատվածում, երբ տրանսպորտային միջոցը վարում են առնվազն երկու վարորդներ, յուրաքանչյուր վարորդ պետք է առնվազն ութ իրարահաջորդ ժամվա հանգիստ ունենա:

3. Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում 1-ին և 2-րդ կետերում նշված հանգստի ժամանակամիջոցները պետք է երկարացվեն ըստ շաբաթական հանգստի, որը ընդհանուր հաշվով կազմում է քառասունհինգ իրարահաջորդ ժամ: Այդ հանգստի ժամանակը կարող է նվազեցվել առնվազն մինչև երեսունվեց իրարահաջորդ ժամ, եթե վերցվում է այն վայրում, որտեղ սովորաբար գտնվում է տրանսպորտային միջոցը կամ վարորդը, կամ առնվազն մինչև քսանչորս իրարահաջորդ ժամ, եթե վերցվում է այլ վայրում: Յուրաքանչյուր նվազեցում պետք է փոխհատուցվի հավասարազոր հանգստով, որն ամբողջությամբ վերցվում է մինչև տվյալ շաբաթվան հաջորդող երրորդ շաբաթվա վերջում:

4. Յուրաքանչյուր շաբաթվա հանգստի ժամանակահատվածը, որն սկսվում է մեկ շաբաթում և շարունակվում հաջորդ շաբաթվա ընթացքում, պետք է կցվի այս շաբաթներից որևէ մեկին:

5. Այն ուղևորափոխադրումների դեպքերում, երբ գործում է 6(1)-րդ հոդվածի 4-րդ ենթակետը, շաբաթական հանգստի ժամանակահատվածը պետք է հետաձգվի մինչև հաջորդ շաբաթ, որի հանգստի ժամանակահատվածը դեռևս առկա է, և գումարվի երկրորդ շաբաթվա շաբաթական հանգստին:

6. Ցանկացած բնույթի հանգիստ, որը վերցվում է որպես օրական և/կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածի նվազեցման փոխհատուցում, պետք է կցվի այլ առնվազն ութ ժամվա հանգստի և տրվի շահագրգիռ աճնի խնդրանքով տրանսպորտային միջոցի կայանման վայրում կամ վարորդի հիմնական տեղում:

7. Օրական հանգստի ժամանակահատվածը կարող է վերցվել տրանսպորտային միջոցում, եթե այն ապահովված է անկողնով և գտնվում է կանգնած վիճակում:

8. Անկախ վերոնշյալ առաջին կետի դրույթներից, երբ վարորդը ներգրավված է բեռների կամ ուղևորների փոխադրման մեջ և ուղեկցվում է տրանսպորտային միջոցով, որը փոխադրվում է լաստանավով կամ գնացքով, ամենօրյա հանգստի ժամանակահատվածը կարող ընդհատվել ավելի քան մեկ անգամ, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

ամենօրյա հանգստի այն ժամանակահատվածը, որն անց է կացվել ցամաքում, պետք է վերցվի մինչև լաստանավի վրա կամ գնացքում վերցվելիք ամենօրյա հանգիստը,

ամենօրյա հանգստի ժամանակահատվածի երկու մասերի միջև ընկած ժամանակամիջոցը պետք է հնարավորինս կարճ լինի և ոչ մի կերպ չպետք է գերազանցի մեկ ժամը մինչև բեռնումը և իջեցումը, մաքսային ձևակերպումները, որոնք ներառված են բեռնման և իջեցման գործողությունների մեջ,

հանգստի ժամանակահատվածի երկու մասերի ընթացքում վարորդը պետք է անկողնուց կամ մահճակալից օգտվելու հնարավորություն ունենա:

Ամենօրյա հանգստի ժամանակահատվածը, որն ընդհատվել է այլ կերպ, պետք է երկարացվի երկու ժամով:

Հոդված 9

Բացառություններ

Ճանապարհային անվտանգությունը չխաթարելու և կանգառի հարմար վայր հասնելու նպատակով վարորդը խիստ անհրաժեշտության դեպքում կարող է անձանց, տրանսպորտային միջոցի կամ դրա բեռի անվտանգությունը ապահովելու նկատառումով չհետևել սույն Համաձայնագրի դրույթներին: Այդ դեպքում վարորդը պետք է հսկիչ սարքի գրանցման թերթիկի կամ իր պարտականությունների մատյանում նշի այս դրույթներին չհետևելու բնույթը և պատճառը:

Հոդված 10

Հսկիչ սարք

1. Պայմանավորվող կողմերն իրենց տարածքներում գրանցված տրանսպորտային միջոցներին պետք է հանձնարարեն հսկիչ սարք տեղադրել և օգտագործել այնհամաձայն հետևյալ պահանջների.

(ա) Հսկիչ սարքի կառուցվածքը, տեղադրումը, օգտագործումը և փորձարկումը պետք է համապատասխանի սույն Համաձայնագրի և նրա անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պահանջներին: Հսկիչ սարքն իր կառուցվածքի, տեղադրման, օգտագործման և փորձարկման առումով պետք է համապատասխանի EEC Խորհրդի 1985թ. դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 որոշմանը և սույն հոդվածի պահանջներին:

(բ) Եթե տրանսպորտային միջոցում տեղադրված հսկիչ սարքի նորմալ և պատշաճ օգտագործումը հնարավոր չէ, ապա անձնակազմի յուրաքանչյուր անդամ համապատասխան գրաֆիկական պատկերների միջոցով պետք է գրանցման թերթիկում ձեռքով մանրամասն տվյալներ գրանցի իր գործունեության և հանգստի ժամանակահատվածների մասին:

(գ) Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցից հեռու գտնվելու պատճառով անձնակազմի անդամներն ի վիճակի չեն օգտագործել սարքը, ապա նրանք համապատասխան գրաֆիկական պատկերների միջոցով, ձեռքով պետք է գրանցման թերթիկում նշումներ անեն տրանսպորտային միջոցից հեռու գտնվելու ժամանակ իրենց կատարած գործունեության մասին:

(դ) Անձնակազմի անդամների մոտ միշտ պետք է մեքենան վարելու ընթացիկ շաբաթվա և նախորդ շաբաթվա գրանցման թերթիկներ լինեն, որոնք կարող են ներկայացվել ստուգման համար:

(ե) Անձնակազմի անդամները պետք է ապահովեն հսկիչ սարքի միացումն ու ճիշտ օգտագործումը և թերի աշխատալեռու դեպքում հնարավորինս շտապ վերանորոգումը:

2. Գործատուն պետք է վարորդներին համապատասխան քանակությամբ գրանցման թերթիկներ տրամադրի՝ մտապահելով, որ այդ թերթիկներն իրենց բնույթով անձնական են, նկատի ունենալով ծառայության տևողությունը և վնասված թերթիկների փոխարինման հնարավորությունը, ինչպես նաև այն, որ դրանք կարող են վերցվել իրավասու հսկիչ աշխատակցի կողմից: Գործատուն պետք է

վարորդներին տրամադրի միայն հաստատված տիպի թերթիկներ, որոնց կիրառումը հարմար է փոխադրամիջոցում տեղադրված սարքավորման մեջ:

3. Ձեռնարկումները պետք է սույն հոդվածի 1-ին կետի բ, գ և դ կետերի համաձայն լրացված գրանցման թերթիկները պատշաճ կերպով պահեն վերջին մուտքագման ամսաթվից հետո առնվազն 12 ամիս և պետք է դրանք ներկայացնեն հսկիչ մարմինների պահանջի դեպքում:

Հոդված 11

Պարտադիր վերասկում

1. Ձեռնարկված միջոցների արդյունքում ավտոմոբիլային տրանսպորտի գործունեությունը պետք է այնպես կազմակերպվի, որ անձնակազմի անդամներն ի վիճակի լինեն հետևել սույն Համաձայնագրի դրույթներին:

2. Այն կանոնավոր կերպով պետք է ստուգի վարման ժամանակահատվածների, այլ աշխատանքների և հանգստի ժամերը՝ հղում կատարելու իր տրամադրության տակ ունեցած բոլոր փաստաթղթերին, ինչպիսին, օրինակ, անձնական հսկման գրքույկն է: Սույն Համաձայնագրի որևէ խախտում հայտնաբերելու դեպքում այն պետք է ձեռնարկի անհապաղ միջոցներ այն վերացնելու և հետագայում դրա կրկնությունից խուսափելու համար, օրինակ՝ աշխատանքի ժամերի կամ երթուղիների մեջ փոփոխություններ կատարելու միջոցով:

3. Աշխատավարձ ստացող վարորդներին տրվող վճարումները, նույնիսկ եթե դրանք կատարվում են դրամական պարզևների և աշխատավարձի հավելավճարների տեսքով, կապված ուղևորության հեռավորությունից և/կամ փոխադրվող բեռների քանակից, պետք է արգելվեն, քանի դեռ այդ վճարումներն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են սպառնալ ճանապարհային անվտանգությանը:

Հոդված 12

Համաձայնագրի պահանջվող միջոցները

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես համապատասխան մակարդակով ճանապարհների ստուգայցեր և միջոցների գործադրման վայրի ստուգայցեր,

որպեսզի ապահովի սույն Համաձայնագրի դրույթների կիրառումը: Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերը պետք է միմյանց տեղյակ պահեն այդ նպատակով ձեռնարկված ընդհանուր միջոցների մասին:

2. Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց աջակցեն սույն Համաձայնագրի կիրառումն ապահովելու հարցում՝ այդպիսով ստուգելով դրա համապատասխանելիությունը:

3. Այդ փոխադարձ աջակցության շրջանակներում Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները պետք է միմյանց ուղարկեն ամբողջ առկա տեղեկատվությունը, որը վերաբերում է.

սույն Համաձայնագրի՝ ոչ տեղաբնակների կողմից թույլ տրված խախտումներին և նման խախտումների համար կատարված ցանկացած տուգանքներին,

Պայմանավորվող կողմի տեղաբնակին նշանակված տուգանքին, որը գործադրվել է Պայմանավորվող կողմի տարածքում կատարված խախտման համար:

Լուրջ խախտումների դեպքում նման տեղեկատվությունը պետք է տեղեկություն պարունակի կիրառված տուգանքի մասին:

4. Եթե Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցը վարողի կողմից ճանապարհի եզերքին հայտնաբերվածը հիմք է տալիս հավատալու, որ կատարված խախտումն անհրաժեշտ տվյալների սակավության պատճառով հնարավոր չէ բացահայտել ստուգման միջոցով, ապա շահագրգիռ Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները պետք է միմյանց աջակցեն իրավիճակը պարզաբանելու համար:

Այն դեպքում, երբ իրավասու Պայմանավորվող կողմն այդ նպատակով միջոցների գործադրման վայրի ստուգայց է իրականացնում, ապա այդ ստուգայցի արդյունքների մասին պետք է հաղորդի մյուս շահագրգիռ կողմին:

Հոդված 13

Անցումային դրույթներ

Նոր՝ 10-րդ՝ «Հսկիչ սարք» հոդվածի դրույթները Պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունների համար մինչև 1995թ. ապրիլի 24-ը պարտադիր բնույթ չեն կրում: Մինչև այդ ժամկետը կշարունակեն կիրառվել նախկին 12-րդ՝

«Անհատական հսկողության գրքույկ» հոդվածի և նախկին 12-րդ կրկնակի՝ «Հսկիչ սարք» հոդվածի դրույթները:

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 14

1. Սույն Համաձայնագիրը բաց է ստորագրման համար մինչև 1971թ. մարտի 31-ը, իսկ դրանից հետո համաձայնագրին կարող են միանալ Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունները և հանձնաժողովի 8-րդ կետի դրույթների համաձայն խորհրդակցական կարգով հանձնաժողով ընդունված պետությունները:

2. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:

3. Վավերացման կամ միացման վերաբերյալ փաստաթղթերը պետք է հանձնվեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վավերացման կամ միանալու մասին ութերորդ փաստաթղթի հանձնման օրից սկսած հարյուրութուներորդ օրը:

5. Ինչ վերաբերում է սույն Համաձայնագիրը վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր պետությանը, ապա սույն հոդվածի 4-րդ կետում նշված վավերացման կամ միանալու մասին ութերորդ փաստաթղթի հանձնումից հետո Համաձայնագիրն ուժի կմտնի այդ պետության կողմից վավերացման կամ միանալու փաստաթղթի հանձնումից հարյուր ութսուն օր հետո:

Հոդված 15

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին համապատասխան դիմում հղելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

2. Դուրս գալն ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից այդ նամակը ստանալու օրից վեց ամիս հետո:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրը կդադարի գործել, եթե ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած տասներկու ամսվա ժամանակահատվածում Պայմանավորվող կողմերի թիվը երեքից պակաս լինի:

Հոդված 17

1. Յուրաքանչյուր պետություն սույն Համաձայնագիրը ստորագրելիս կամ վավերացման կամ միանալու փաստաթղթերը հանձնելիս կամ դրանից հետո ցանցկացած պահի, կարող է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցմամբ հռչակել, որ սույն Համաձայնագրի ուժի մեջ լինելը, ելնելով միջազգային փոխհարաբերություններից, տարածվում է այն բոլոր կամ մի քանի տարածքների վրա, որոնց համար նա պատասխանատու է: Համաձայնագիրը կգործի ծանուցման մեջ նշված տարածքում կամ տարածքներում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալու օրից հարյուր ութսուն օր հետո, իսկ եթե այդ օրը Համաձայնագիրը դեռևս ուժի մեջ չի մտել, ապա դրա ուժի մեջ մտնելու օրից:

2. Յուրաքանչյուր պետություն, որը նախորդ կետի համաձայն հռչակել է սույն Համաձայնագրի կիրառման մասին այն տարածքում, որի միջազգային փոխհարաբերությունների պատասխանատուն է հանդիսանում, կարող է 15-րդ հոդվածի դրույթների համաձայն Համաձայնագիրն այդ տարածքի համար չեղյալ համարել առանձին:

Հոդված 18

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած տարաձայնություն, որը ծագում է Պայմանավորվող կողմերի միջև, պետք է հնարավորության սահմաններում կարգավորվի միմյանց միջև բանակցությունների միջոցով:

2. Յուրաքանչյուր տարաձայնություն, որը չի կարգավորվում բանակցությունների միջոցով, Պայմանավորվող կողմերից մեկի պահանջով պետք է ներկայացվի արբիտրաժային դատարան և համապատասխանաբար հանձնվի մեկ կամ մի քանի դատավորների, որոնք ընտրվում են տարաձայնություն ունեցող կողմերի համաձայնությամբ: Եթե դատավարության պահանջի ներկայացումից հետո երեք ամսվա ընթացքում տարաձայնություն ունեցող կողմերը չեն կարողանում համաձայնության գալ միջնորդ դատավորի կամ դատավորների ընտրության հարցում, ապա այդ կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝ նշանակելու մեկ միջնորդ դատավորի, որը կարողանա տարաձայնության վերաբերյալ որոշում կայացնել:

3. Նախորդ կետում նշված կարգով նշանակված միջնորդ դատավորի կամ դատավորների որոշումը պարտադիր բնույթ է կրում Պայմանավորվող կողմերի համար:

Հոդված 19

1. Ցանկացած պետություն սույն Համաձայնագիրը ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս կարող է հռչակել, որ 18-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներն իր վրա չեն տարածվում: Մյուս Պայմանավորվող կողմերի վրա այն Պայմանավորվող կողմերի նպատմամբ, որոնք միացել են նման վերապահումով, այդ դրույթները նույնպես չեն տարածվում:

2. Եթե վավերացման կամ միանալու փաստաթղթերը հանձնելիս պետության կողմից արվում է այլ վերապահում՝ չնախատեսված սույն հոդվածի 1-ին կետում, ապա Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը պետք է այդ վերապահման մասին հաղորդի այն պետություններին, որոնք նախկինում հանձնել են իրենց վավերացման կամ միացման փաստաթղթերը և դեռևս սույն Համաձայնագրից դուրս չեն եկել: Վերապահումը պետք է համարվի ընդունված, եթե նշված պետություններից որևէ մեկը նման հաղորդագրությունն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում որևէ առարկություն չի ներկայացրել այդ վերապահումն ընդունելու վերաբերյալ: Հակառակ դեպքում վերապահումը չի ընդունվի, եթե այն ներկայացրած պետությունը դրանից չիրաժարվի և պետության կողմի ներկայացված վավերացման կամ ընդունման փաստաթղթերն ուժի մեջ չեն մտնի: Սույն կետի կիրառման նպատակով կանտեսվեն այն պետությունների առարկությունները, որոնք միացել են Համաձայնագրին կամ վավերացրել այն, սույն կետի համաձայն իրենց դեմ արված վերապահումների առումով:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որի վերապահումն ընդունվել է սույն Համաձայնագրի ստորագրման արձանագրության մեջ, կամ որը սույն հոդվածի 1-ին կետի համաձայն միացել է վերապահումով կամ արել է վերապահում, որն ընդունվել է համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի, ցանկացած պահի կարող է հրաժարվել այդ վերապահումից՝ այդ մասին ծանուցում ուղարկելով Գլխավոր քարտուղարին:

Հոդված 20

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով պահանջել, որպեսզի հրավիրվի համաժողով՝ սույն Համաձայնագիրը վերանայելու համար: Գլխավոր քարտուղարը պետք է բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնի այդ մասին և հրավիրի վերանայման համաժողով, եթե Պայմանավորվող կողմերից առնվազն մեկ երրորդը Գլխավոր քարտուղարի ծանուցումը ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում չհայտնի, որ համաձայն չէ այդ պահանջին:

2. Եթե նախորդ կետի համաձայն հրավիրվում է համաժողով, ապա Գլխավոր քարտուղարը պետք է բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնի այդ մասին և առաջարկի նրանց երեք ամսվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ՝ քննարկելու համաժողովի ընթացքում: Համաժողովի հանդիպման օրից առնվազն երեք ամիս առաջ Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին շրջանառու նամակով պետք է տեղեկացնի համաժողովի նախնական օրակարգի և առաջարկությունների տեքստերի մասին:

3. Գլխավոր քարտուղարը սույն հոդվածով նախատեսված ցանկացած համաժողովի կազմակերպման դեպքում պետք է հրավիրի այն բոլոր պետություններին, որոնք նշված են սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետում:

Հոդված 21

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սույն Համաձայնագրի համար կարող է առաջարկել մեկ կամ մի քանի լրացումներ: Առաջարկվող լրացումների տեքստը պետք է հաղորդվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին պետք է հաղորդի բոլոր Պայմանավորվող կողմերին և տեղեկացնի սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր այլ պետություններին:

2. Գլխավոր քարտուղարի կողմից առաջարկված լրացումների մասին հաղորդելու օրից հետո վեց ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Գլխավոր քարտուղարին կարող է տեղեկացնել, որ.

(ա) առարկություն ունի առաջարկվող լրացման կապակցությամբ, կամ

(բ) թեև մտադիր է ընդունել առաջարկը, սակայն այն ընդունելու համար անհրաժեշտ պայմանները դեռևս իրագործված չեն իր պետությունում:

3. Եթե Պայմանավորվող կողմը Գլխավոր քարտուղարին ուղարկում է սույն հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետում նշված հաղորդագրություն, ապա կարող է մինչև առաջարկվող լրացումն իր կողմից ընդունվելու մասին Գլխավոր քարտուղարին տեղեկացնելը իր հաղորդակցության համար նախատեսված վեցամսյա ժամանակահատվածին հաջորդող ինն ամսվա ընթացքում ներկայացնել առարկություն՝ կապված առաջարկվող լրացման հետ:

4. Եթե առաջարկված լրացման առարկությունը ներկայացվել է սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների համաձայն, ապա լրացումը կհամարվի չընդունված և ուժի մեջ չի մտնի:

5. Եթե առաջարկված լրացման համար սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների համաձայն որևէ առարկություն չի ստացվել, ապա լրացումը կհամարվի ընդունված:

(ա) եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը, սույն հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն, սույն հոդվածի 2-րդ կետում նշված վեցամսյա ժամկետը լրանալու օրից, որևէ հաղորդագրություն չի ուղարկել Գլխավոր քարտուղարին,

(բ) եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը, սույն հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն, որևէ հաղորդագրություն է ուղարկել Գլխավոր քարտուղարին հետևյալ երկու ամսաթվերից ավելի վաղ.

- այն օրը, երբ բոլոր Պայմանավորվող կողմերը, որոնք իրենց հաղորդագրություններն ուղարկել էին Գլխավոր քարտուղարին, տեղեկացրել են, որ ընդունում են առաջարկությունը, որը ենթակա է այն դրույթին, որ եթե բոլոր ընդունողներին տեղեկացվել է նախքան սույն հոդվածի 2-րդ կետում նշված վեցամսյա ժամկետի լրանալը, ապա այդ օրը պետք է համարվի նշված վեցամսա ժամկետը լրանալու օր:

- սույն հոդվածի 3-րդ կետում նշված ինն ամսվա ժամանակահատվածի լրանալու օրը:

6. Յուրքանաչյուր ընդունված համարվող լրացում պետք է ուժի մեջ մտնի ընդունվելու օրից երեք ամիս հետո:

7. Գլխավոր քարտուղարը պետք է հնարավորինս շուտ բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնի՝ արդյոք սույն հոդվածի 2-րդ կետի (ա) ենթակետի համաձայն ստացվե՞լ է առաջարկված լրացմանը վերաբերող առարկություն, և արդյոք նա սույն հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն մեկ կամ մի քանի Պայմանավորվող կողմերից ստացե՞լ է հաղորդագրություն: Եթե նա ստացել է նման հաղորդագրություն մեկ կամ մի քանի Պայմանավորվող կողմերից, հետագայում պետք է բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնի՝ արդյոք հաղորդագրություն ուղարկած Պայմանավորվող կողմը կամ կողմերն առարկություն ունե՞ն՝ կապված առաջարկվող լրացման հետ:

8. Անկախ լրացումների արարողակարգին վերաբերող սույն հոդվածի 1-6-րդ կետերից, սույն Համաձայնագրի հավելվածը պետք է փոփոխության ենթարկվի բոլոր Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերի միջև ձեռք բերված համաձայնությամբ. եթե Պայմանավորվող կողմերից մեկի իրավասու վարչակազմը հայտարարում է, որ համաձայն տեղական օրենքի, իր համաձայնությունը կախված է այս նպատակով հատուկ լիազորումից կամ իրավական մարմնի հաստատումից, ապա Պայմանավորվող կողմի իրավասու վարչակազմի համաձայնությունը, կապված հավելվածի փոփոխության հետ, չպետք է համարվի տրված, քանի դեռ նշված իրավասու վարչակազմը Գլխավոր քարտուղարին չի տեղեկացնի, որ անհրաժեշտ լրագործումը կամ հաստատումը ձեռք է բերվել: Իրավասու վարչակազմերի միջև ձեռք բերված համաձայնությամբ կնշանակվի փոփոխության ենթարկված հավելվածն ուժի մեջ մտնելու օրը, ինչպես նաև կարող է սահմանվել, որ անցումային շրջանում հին հավելվածը փոփոխության ենթարկված հավելվածի հետ մեկտեղ ամբողջությամբ կամ մասամբ պետք է մնա ուժի մեջ:

Հոդված 22

1. Սույն Համաձայնագրի հավելվածի 1-ին և 2-րդ առդիրները սույն հոդվածում նշված ընթացակարգի համաձայն կարող են ենթարկվել լրամշակման:

2. Պայմանավորվող կողմի խնդրանքով, սույն Համաձայնագրի հավելվածի 1-ին և 2-րդ առդիրների մեջ առաջարկվող փոփոխությունները պետք է ուսումնասիրվեն Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական աշխատանքային խմբի կողմից:

3. Եթե այն ընդունվում է ներկա և քվեարկող անդամների մեծամասնության կողմից, և եթե այդ մեծամասնությունը ներառում է Պայմանավորվող կողմերի

մեծամասնությունը, որոնք ներկա են և քվեարկում են, ապա լրացումը Գլխավոր քարտուղարի կողմից պետք է հաղորդվի բոլոր Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերին՝ ընդունման համար:

4. Լրացումը պետք է ընդունվի, եթե հաղորդելուց հետո վեց ամսվա ընթացքում Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերի նվազ քան մեկ երրորդը տեղեկացնի Գլխավոր քարտուղարին լրացման վերաբերյալ իրենց առարկությունների մասին:

5. Յուրաքանչյուր ընդունված լրացում պետք է բոլոր Պայմանավորվող կողմերին հաղորդվի Գլխավոր քարտուղարի կողմից և պետք է ուժի մեջ մտնի հաղորդման օրից երեք ամիս հետո:

Հոդված 23

Ի հավելումն սույն Համաձայնագրի 20-րդ և 21-րդ հոդվածներում նշված հաղորդագրությունների, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը պետք է 14-րդ հոդվածում նշված պետություններին տեղեկացնի հետևյալի մասին.

(ա) սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածով նախատեսված վավերացումների և միանալու,

(բ) սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարեթիվը՝ համաձայն 14-րդ հոդվածի,

(գ) դուրս գալը՝ համաձայն սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի,

(դ) սույն Համաձայնագրի դադարեցումը՝ համաձայն 16-րդ հոդվածի,

(ե) ստացված հաղորդագրությունները՝ համաձայն սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածի,

(զ) հռչակումները և ծանուցումները, որոնք ստացվել են համաձայն 19-րդ հոդվածի,

(է) յուրաքանչյուր լրացման ուժի մեջ մտնելը՝ համաձայն 21-րդ հոդվածի:

Հոդված 24

Սույն Համաձայնագրի ստորագրման արձանագրությունը պետք է ունենա այն նույն ուժը, վավերականությունը և տևողությունը, ինչ Համաձայնագիրը, որի անբաժանելի մասն է հանդիսանալու այն:

Հոդված 25

1971թ. մարտի 31-ից հետո սույն Համաձայնագրի բնօրինակը հանձնվելու է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը կփոխանցի դրա հաստատված իսկական պատճենները 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին:

Լրացում - հսկիչ սարք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I. ՏԻՊԱՅԻՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հոդված 1

Հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նմուշի հաստատման դիմումը պետք է մանրամասն նկարագրությամբ արտադրողի կամ նրա գործակալի կողմից ներկայացվի Պայմանավորվող կողմին: Հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի որևէ նմուշ չպետք է հաստատման ներկայացվի մեկից ավելի Պայմանավորվող կողմի:

Հոդված 2

Որևէ Պայմանավորվող կողմ կհաստատի հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նմուշի հաստատման դիմումը, որը համապատասխանում է սույն լրացման 1-ին հավելվածում սահմանված պահանջներին, պայմանով, որ Պայմանավորվող կողմը պետք է ստուգի՝ համապատասխանում է արդյոք այդ արտադրության նմուշը հաստատված տիպային նմուշին:

Բնօրինակը հաստատած Պայմանավորվող կողմը հավելյալ կերպով/լրացուցիչ կարգով պետք է հաստատի հաստատված փոփոխության հիման վրա կատարված ցանկացած ձևափոխում և լրացում:

Հոդված 3

2-րդ հավելվածում ցույց տրված նմուշին համապատասխանող ցանկացած տեսակի հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նմուշի համար, որոնք հաստատվում են համաձայն 2-րդ հոդվածի, Պայմանավորվող կողմերը դիմողին պետք է տան հաստատման նշան:

Հոդված 4

Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները, որոնց ներկայացվել է տիպային նմուշի հաստատման ձևը, ցանկացած տեսակի հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նմուշի համար, որը նրանք հաստատել են կամ հրաժարվել հաստատելուց, պետք է մյուս Պայմանավորվող կողմի մարմիններին մեկ ամսվա ընթացքում ուղարկեն հաստատման հավաստագիրը՝ դրան կցելով համապատասխան բնութագրիչների պատճենները կամ, հակառակ դեպքում, այդ

մարմիններին տեղեկացնեն հաստատման գործընթացի մերժման մասին. մերժման դեպքում նրանք պետք է հաղորդեն կայացրած որոշման պատճառները:

Հոդված 5

1. Եթե Պայմանավորվող կողմը 2-րդ հոդվածի համաձայն հաստատում է տիպային նմուշը և հետագայում պարզում, որ հաստատման նշանը կրող հսկիչ սարքը կամ գրառումների թերթիկի նմուշը չեն համապատասխանում հաստատված տիպային ձևին, ապա համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն արտադրման նմուշները հաստատված նմուշին համապատասխանեցնելու համար: Անհրաժեշտության դեպքում կատարված հաստատումը կարող է անվավեր ճանաչվել:

2. Տիպային նմուշը հաստատած Պայմանավորվող կողմը կարող է այն անվավեր համարել, եթե հաստատված հսկիչ սարքը կամ գրառումների թերթիկը չեն համապատասխանում սույն լրացմանը կամ դրա հավելվածներին կամ այնպիսի ընդհանուր թերություն ունեն, որը չի համապատասխանում դրա հատկացման նպատակներին:

3. Եթե մի ուրիշ Պայմանավորվող կողմ տիպային նմուշը հաստատած Պայմանավորվող կողմին տեղեկացնում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերի մասին, ապա այդ մասին Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցելուց հետո այն կարող է նշված կետերով նախատեսված համապատասխան քայլեր ձեռնարկել՝ համաձայն 5-րդ կետի:

4. Այն Պայմանավորվող կողմը, որը վստահեցնում է, որ ի հայտ է եկել 2-րդ կետում նշված դեպքերից որևէ մեկը, ապա մինչև հետագա ծանուցումը կարող է արգելել հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի շուկա դուրս բերելը և այն շահագործելը: Նույնը վերաբերում է նաև 1-ին կետում նշված դեպքերին՝ կապված հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նախնական վավերացում չանցնելուն, եթե արտադրողը զգուշացվելուց հետո սարքը չի համապատասխանեցնում հաստատված տիպային նմուշին կամ սույն հավելվածի պահանջներին:

Ցանկացած դեպքում Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները մեկամսյա ժամկետում պետք է տեղեկացնեն միմյանց 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն տիպային հաստատումը մերժելու կամ այլ միջոցների ձեռնարկման մասին՝ նշելով դրանց պատճառները:

5. Եթե տիպային նմուշը հաստատում Պայմանավորվող կողմը առարկում է 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերի առկայությունը, որոնց մասին հայտնվել է իրեն, ապա առնչվող Պայմանավորվող կողմերը պետք է համատեղ ջանքերով փորձեն կարգավորել տարաձայնությունը:

Հոդված 6

1. Գրառումների թերթիկի տիպային ձևի հաստատման համար դիմողը պետք է իր դիմումում սահմանի հսկիչ սարքի տեսակը կամ տեսակները, որոնց համար օգտագործվելու է խնդրո առարկա հանդիսացող թերթիկը, և այդ տեսակի կամ տեսակների համար պետք է տրամադրի համապատասխան սարքավորում՝ այդ թերթիկները ստուգելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմին գրառումների թերթիկի տիպային նմուշի համար հաստատման հավաստագրում պետք է նշի հսկիչ սարքի տեսակը կամ տեսակները, որոնց վրա այդ թերթիկը կարող է օգտագործվել:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող հրաժարվել վերահսկիչ սարքին համապատասխանող փոխադրամիջոցը գրանցելուց կամ արգելել նման փոխադրամիջոցի շահագործումը կամ օգտագործումը, եթե փաստացի այդ փոխադրամիջոցի վրա հարմարեցված է այդ սարքը, եթե այդ սարքը կրում է 3-րդ հոդվածում նշված հաստատման նշանը և 9-րդ հոդվածում նշված տեղադրման նշանը:

Հոդված 8

Սույն լրացման համաձայն, հսկիչ սարքի տեսակի կամ գրառումների թերթիկի հաստատումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին կայացված որոշումներում պետք է մանրակրկիտ նշվեն հիմնական պատճառները: Որոշման մասին պետք է հաղորդվի շահագրգիռ կողմին, որը միևնույն ժամանակ պետք է տեղեկացվի այն առկա միջոցների մասին, որոնց շնորհիվ, ըստ Պայմանավորվող կողմի օրենքների և ժամանակահատվածների, հնարավոր կլինի վերացնել այն:

II. ՏԵՂԱԴԲՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ

Հոդված 9

1. Հսկիչ սարքը կարող է տեղադրվել կամ վերանորոգվել Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից այդ նպատակներով հաստատված տեղադրողների կամ արհեստանոցների կողմից, եթե վերջիններիս ցանկության դեպքում հաշվի է առնված շահագրգիռ արտադրողների կարծիքը:
2. Հաստատված տեղադրողը կամ արհեստանոցը իր կողմից դրված կնիքների վրա պետք է ունենա հատուկ նշան: Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները օգտագործված նշանների համար պետք է մատյան վարեն:
3. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները միմյանց պետք է ուղարկեն իրենց կողմից հաստատված տեղադրողների և արհեստանոցների ցուցակները, ինչպես նաև կիրառվող նշանների օրինակները:
4. Նպատակ ունենալով հավաստել, որ հսկիչ սարքի տեղադրումը կատարվել է համաձայն սույն լրացման պահանջների, պետք է կիրառվի 1-ին հավելվածում նշված ֆիքսված տեղակայման հարթակ:

II. ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 10

Գործատուն և վարորդները պատասխանատու են սարքի պատշաճ աշխատանքին հետևելու համար:

Հոդված 11

1. Վարորդները չպետք է օգտագործեն կեղտոտ կամ վնասված գրառումների թերթիկներ: Այս առումով թերթիկները պետք է համապատասխան կերպով պաշտպանվեն:

Այն դեպքում, երբ գրառումները պարունակող թերթիկը վնասվում է, ապա վարորդները պետք է վնասված թերթիկը կցեն այն նոր թերթիկին, որը փոխարինելու է դրան:

2. Վարորդները, սկսած այն պահից, երբ նրանք նստում են դեկին, իրենց վարման յուրաքանչյուր օր պետք է գրառումների թերթիկներ օգտագործեն: Գրառումների թերթիկը չպետք է շրջանառությունից հանվի մինչև աշխատանքային օրվա ժամի ավարտը, եթե դրա շրջանառությունից հանումը որևէ կերպ լիազորված

չէ: Գրառումների թերթիկները դրանց համար նախատեսված ժամանակահատվածից ավելի չպետք է օգտագործվեն:

Այն դեպքում, երբ մեքենայից հեռու գտնվելու պատճառով վարորդը չի կարող օգտագործել մեքենայում հարմարեցված սարքը, ժամանակահատվածները պետք է նշվեն թերթիկում կա՛մ ձեռքի միջոցով կա՛մ ավտոմատ գրանցմամբ կա՛մ այլ կերպ՝ հստակ կերպով, առանց թերթիկի վնասման:

Վարորդները պետք է գրառումների թերթիկը լրացնեն ըստ անհրաժեշտության, եթե մեքենայում կան երեքից ավելի վարորդներ, որպեսզի 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 1-3-րդ կետերում նշված տեղեկատվությունը գրառումների թերթիկում գրանցվի այն վարորդի կողմից, որը փաստացի վարում է այն:

3. Հսկիչ սարքը պետք է այնպես ձևավորվի, որպեսզի լիազորված վերահսկող պաշտոնյային անհրաժեշտության դեպքում հնարավորություն տրվի կարգալու նախորդ ինը ժամվա ընթացքում կատարված համապատասխան գրանցումները՝ առանց ձևափոխելու, վնասելու կամ կեղտոտելու թերթիկը:

Բացի դրանից, վերասկիչ սարքը պետք է այնպես ձևավորված լինի, որ հնարավորություն տա առանց պատյանը բացելու վստահեցնելու, որ գրանցումները կատարվում են:

4. Եթե հսկողության համար լիազորված պաշտոնյայի կողմից պահանջվում է կատարել այդ, ապա վարորդը պետք է կարողանա ցույց տալ ընթացիկ շաբաթվա գրանցումների թերթիկը և, ամեն դեպքում, նախորդ շաբաթվա վերջին օրվա գրանցումները, երբ նա վարել է մեքենան:

Լրացում. Հավելված 1

ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՓՈՐՉԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԳՐՄԱՆ

ԵՎ ԱՏՈՒԳՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն հավելվածում.

(ա) «հսկիչ սարք» նշանակում է ճանապարհային փոխադրամիջոցների վրա տեղադրման համար նախատեսված սարքավորում՝ ավտոմատ և կիսավտոմատ կերպով ցույց տալու և ձայնագրելու համար այդ փոխադրամիջոցների շարժման և վարորդների որոշակի աշխատանքային ժամերի մանրամասները.

(բ) «գրառումների թերթիկ» նշանակում է գրանցելու և պահպանելու համար նախատեսված թերթիկ, որը դրվում է հսկիչ սարքում և որի վրա վերջինիս նշագրման սարքերը կատարում են ձայնագրման ենթակա տեղեկության շարունակական ձայնագրում;

(գ) «հսկիչ սարքի մշտականություն» նշանակում է անցած 1 կիլոմետր տարածություն ցույց տալու և ձայնագրելու համար պահանջվող ազդանշանի արժեքը որոշող թվային հատկությունը.

(դ) «փոխադրամիջոցի թվային գործակից» նշանակում է փոխադրամիջոցի մի մասը հսկիչ սարքի հետ միացնող ազդանշանի արձակման պահանջվող արժեքը որոշող թվային հատկությունը (տրանսմիսիոն ՉՕԻՏՊԸՏ ՉՈՍ կամ սոնի) նորմալ փորձարկման պայմաններում փոխադրամիջոցի՝ սահմանված մեկ կիլոմետր տարածություն անցնելու ժամանակ (տե՛ս սույն հավելվածի 4-րդ բաժնի 4-րդ կետը): Թվային գործակիցն արտահայտվում է կա՛մ մեկ կիլոմետրի համար պտույտներով ($W = \text{պտույտ/կմ}$) կա՛մ մեկ կիլոմետրի համար իմպուլսներով ($W = \dots \text{ իմպուլս/կմ}$):

(ե) «անիվների դողերի շրջանագծի երկարություն» նշանակում է փոխադրամիջոցը շարժող տարբեր անիվներով անցած տարածության միջինը մեկ ամբողջ պտույտի պարագայում: Այդ տարածությունների չափումը պետք է կատարվի նորմալ փորձակման պայմաններում (տե՛ս սույն հավելվածի 4-րդ բաժնի 4-րդ կետը) և արտահայտվում է հետևյալ բանաձևով. $1 = \dots$ մմ:

II. ՀՄԿԻՉ ՍԱՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հսկիչ սարքը պետք է կարողանա ձայնագրել հետևյալը.

1. փոխադրամիջոցի անցած տարածությունը,

2. փոխադրամիջոցի արագությունը,
3. մեքենան վարելու ժամանակը,
4. աշխատանքի և առկայության այլ ժամկետները,
5. աշխատանքի և օրական հանգստի ժամանակի ընդմիջումները,
6. գրառումների թերթիկը պարունակող տուփի բացումը,
7. էլեկտրական հսկիչ սարքի համար, որն ազդարարում է անցած տարածությունը և արագությունը ավտոմատ կերպով փոխանցվող ազդանշանների միջոցով, ձայնագրող սարքում էլեկտրական մատակարարման տարածության և արագության ցուցիչի 100 միլիվայրկյանը գերազանցող ցանկացած ընդհատում (բացի լուսարձակումից), ինչպես նաև ազդանշանի ցանկացած ընդհատում, որն ազդում է տարածության և արագության որոշման վրա:

Երկու վարորդների կողմից օգտագործվող փոխադրամիջոցների համար հսկիչ սարքը պետք է հնարավորություն ունենա միաժամանակ և պարզորոշ ու երկու առանձին թերթիկների վրա ձայնագրելու 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված հատվածները:

III. ՀՄԿԻՉ ՍԱՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1. Հսկիչ սարքը պետք է պարունակի.
 - (ա) տեսանելի սարքավորումներ, որոնք ցույց են տալիս՝ անցած տարածությունը (տարածության ձայնագրիչ), արագությունը (արագության ձայնագրիչ), ժամանակը (ժամացույց),
 - (բ) Ձայնագրող սարքեր, որոնք բաղկացած են՝ անցած տարածության ձայնագրիչից, արագության ձայնագրիչից, մեկ կամ ավելի ժամանակի ձայնագրիչներից, որոնք բավարարում են 3-րդ բաժնի C 4 կետում նշված պահանջները,
 - (գ) գրանցման թերթիկի վրա անձանձին ցույց տրված նման միջոցները.

թերթիկը պարունակող պատյանի յուրաքանչյուր բացում,

Էլեկտրոնային հսկիչ սարքի համար, ինչպես նշված է 2-րդ բաժնի 7-րդ կետում, հսկիչ սարքի հոսանքի մատակարարման ցանկացած ընդհատում, որը գերազանցում է 100 միլիվայրկյանը (բացառությամբ լուսարձակման), ոչ ուշ քան հոսանքի մատակարարման վերասկսումը,

Էլեկտրոնային հսկիչ սարքի համար, ինչպես նշված է 2-րդ գլխի 7-րդ կետում, հեռավորության և արագության ցուցիչների 100 միլիվայրկյանը գերազանցող հոսանքի մատակարարման ցանկացած ընդհատում և հեռավորության և արագության ցուցիչների հաղորդվող ազդանշանների ցանկացած ընդհատում:

2. Վերը նշված սարքերում որևէ այլ լրացուցիչ սարքավորումների ներառումը չպետք է խոչընդոտ լինի պարտադիր սարքի պատշաճ գործունեության և դրա ընթերցման համար:

Հսկիչ սարքը պետք է հաստատվի այդ լրացուցիչ սարքերի հետ միասին:

3. Նյութեր.

(ա) Հսկիչ սարքի բոլոր բաղադրյալ մասերը պետք է պատրաստված լինեն համապատասխան կայունություն ունեցող, մեխանիկական ամրությամբ, կայուն էլեկտրական և մագնիսական հատկություններով օժտված նյութերից:

(բ) Հսկիչ սարքի բաղադրյալ մասերի կամ դրա արտադրողի կողմից օգտագործված նյութերի բնույթի մեջ որևէ փոփոխություն կատարելիս, նախքան արտադրողին դիմելը այն պետք է հաստատման հանձնվի այն իրավասու մարմնին, որը հաստատել է հսկիչ սարքի նմուշը:

(գ) Անցած տարածության չափումը.

Անցած տարածությունը կարող է չափվել և գրանցվել հետևյալ տարբերակներով.

որպեսզի ներառվեն առաջընթաց և հետընթաց շարժերը, կամ

որպեսզի ներառվի միայն առաջընթացի շարժը.

Հետընթաց շարժման ցանկացած ձայնագրում չպետք է որևէ կերպ ազդի մյուս գրանցումների հստակության և ճշգրտության վրա:

5. Արագության չափումը

(ա) արագության չափման սարքը պետք է նշվի տիպային նմուշի հաստատման հավաստագրում:

(բ) բնական հաճախության և չափիչ սարքի արգելակումը պետք է լինի այնպիսին, որպեսզի արագությունը ցուցադրող և գրանցող սարքավորումները չափման տիրույթում հետևեն արագության փոփոխություններին մինչև 2 մ/ս^2 հնարավոր թույլատրելի սահմաններում:

6. Ժամանակի չափումը (ժամացույց).

(ա) ժամացույցը գրոյական վիճակի բերող սարքավորման հսկիչ մասը պետք է տեղադրվի գրանցման թերթիկը պարունակող պատյանի ներսում. այդ պատյանի ցանկացած բացում պետք ինքնաբերաբար նշվի գրանցման թերթիկում:

(բ) Եթե գրանցման թերթիկի առաջընթաց շարժի սարքավորումը վերահսկվում է ժամացույցով, ապա այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերջինս լիովին վնասված լինելուց հետո կսկսի ճշգրտորեն աշխատել, պետք է լինի սարքավորման թերթիկների լիցքավորման գրանցումների ժամանակահատվածից առնվազն 10%-ով ավել:

7. Լուսարձակում և պաշտպանում.

(ա) Հսկիչ սարքի տեսողական սարքերը պետք է ապահովվեն համապատասխան չկուրացնող լուսարձակմամբ:

(բ) Օգտագործման նորմալ պայմաններում հսկիչ սարքի բոլոր ներքին մասերը պետք է պաշտպանված լինեն խոնավությունից և փոշուց: Ի լրումն՝ դրանք պետք է պաշտպանված լինեն կեղծ կնիքներից:

Բ. Տեսողական սարքավորումները

1. Անցած տարածության ցուցիչ (տարածությունը գրանցող).

(ա) Անցած ճանապարհը ցույց տվող հսկիչ սարքի ամենավոքը մասնաբաժինը պետք է լինի 0.1 կմ: Հեկտոմետրները ցույց տվող նշանները պետք է հստակ կերպով տարբերվեն ամբողջական կիլոմետրները ցույց տվողներից:

(բ) Տարածության գրանցման նշանները պետք է լինեն պարզ ընթեռնելի և ունենան տեսանելի բարձրություն՝ առնվազն 4 մմ չափով:

(գ) Տարածության գրանցման ցուցիչը պետք է կարողանա ընթեռնել առնվազն մինչև 99 999, 9 կմ

2. Արագության ցուցիչներ (սպիդոմետր)

(ա) Չափումների տիրույթում արագության սանդղակը պետք է միանման կերպով բաշխվի լինի 1, 2, 5 կամ 10 կմ: Արագությունների բաշխման արժեքը (իրարահաջորդ նշանների միջև ընկած տարածությունը) չպետք է գերազանցի սանդղակի վրա ցուցադրվող առավելագույն արագության 10 %-ը:

(բ) Սահմանված տիրույթից դուրս ընկած մասը թվերով նշելու կարիք չունի:

(գ) 10 կմ/ժ արագության տարբերությունը ներկայացնող սանդղակի խորաքանչյուր հատվածի երկարությունը չպետք է 10 մմ-ից պակաս լինի:

(դ) Սլաքով ցուցիչի վրա սլաքի և հսկիչ սարքի մակերևույթի միջև ընկած տարածությունը չպետք է գերազանցի 3 մմ-ը:

3. Ժամանակի ցուցիչ (ժամացույց).

Ժամանակի ցուցիչը պետք է հսկիչ սարքի արտաքին կողմից տեսանելի և հստակ, պարզ ու ընթեռնելի լինի:

C Գրանցող սարքավորում

1. Ընդհանուր կետեր.

(ա) Բոլոր սարքավորումները, անկախ գրառումների թերթիկի ձևից (ժապավեն կամ սկավառակ), պետք է նշան կրեն, որպեսզի գրառումների թերթիկը տեղադրվի ճիշտ կերպով, և ժամացույցի ցույց տված ժամանակը և թերթիկի վրայի ժամանակի մասին նշումը համապատասխանեն միմյանց:

(բ) Գրառումների թերթիկը շարժող սարքավորումը պետք է այնպիսին լինի, որ տատերը շարժվեն առանց տատանման և հնարավոր լինի դրանք հեշտությամբ հանել ու տեղադրել:

(գ) Սկավառակի ձևով գրառումների թերթիկի առաջ շարժելու սարքը պետք է կառավարվի ժամացույցի մեխանիզմով: Այդ դեպքում թերթիկի պտտեցման շարժումը պետք է լինի շարունակական և միատեսակ՝ 7 մմ/ժամ նվազագույն արագությամբ՝ հաշված արագության գրանցման տիրույթի եզրագծի զանգի նշման վերջին սահմանից:

Ժապավենի ձևով սարքավորման մեջ, որում թերթիկների առաջ շարժման սարքը հսկվում է ժամացույցով, ուղղաձիգ առաջ շարժվելու արագությունը պետք է լինի առնվազն 10 մմ մեկ ժամում:

(դ) Անցած տարածության, փոխադրամիջոցի արագության և գրառումների թերթիկը կամ թերթիկները պարունակող պատյանի ցանկացած բացման գրանցումը պետք է կատարվի ավտոմատ կերպով:

2. Անցած տարածության գրանցումը.

(ա) Անցած տարածության յուրաքանչյուր կիլոմետր պետք է արտացոլվի գրանցման մեջ՝ համապատասխան կոորդինատի համար առնվազն 1 մմ տատանումով:

(բ) Անգամ այն դեպքում, երբ արագությունը հասնում է չափման տիրույթի գագաթնակետին, տարածությունների գրանցումը միշտ պետք է լինի պարզ ընթեռնելի:

3. Արագության գրանցում.

(ա) Անկախ գրանցման թերթիկի ձևից, արագության գրանցման սլաքը պետք է սովորաբար շարժվի ուղիղ գծով և գրանցման թերթիկի ուղևորության ուղղության աջ անկյուններով:

Այնուամենայնիվ, սլաքի շարժը կարող է լինել թեք գծով՝ ապահովելով հետևյալ պայմանների առկայությունը.

սլաքի թողած հետքերը պետք է լինեն ուղղահայաց միջին շրջանագծի (այն դեպքում, երբ թերթիկները սկավառակի ձև ունեն) կամ արագության գրառումների համար նախատեսված տիրույթի առանցքի նկատմամբ,


սլաքի կողմից պատկերված կորագծի շառավղի միջև եղած հարաբերակցությունը և արագության գրառումների համար նախատեսված տիրույթը պետք է լինի առնվազն 2.4-ը 1-ի հարաբերակցությամբ, անկախ գրառումների թերթիկի ձևից,


ժամանակացույցի վրա կատարված նշանները պետք է հատեն գրառումների տիրույթը միևնույն շառավղի ունեցող կորով, որը հետագծվել է սլաքի կողմից:


ժամանակացույցի վրա նշումների միջև ընկած տարածությունը պետք է ներկայացնի 1 ժամը չգերազանցող ժամանակահատված: 10 կմ/ժ արագության յուրաքանչյուր փոփոխություն պետք է ներկայացվի գրառման մեջ առնվազն 1.5 միլիմետր տատանմամբ համապատասխան կոորդինատում:

4. Ժամանակի գրանցումը.

(ա) Հսկիչ սարքը պետք է այնպես պատրաստված լինի, որ մեքենան վարելու ժամանակահատվածը միշտ ինքնընթաց կերպով գրանցվի, և, եթե հնարավոր է, անհրաժեշտ գործողության դեպքում առանձին գրանցի այլ ժամանակահատվածները հետևյալ կերպ.


I  նշանի տակ հասկացվում է մեքենան վարելու ժամանակը,

II  նշանի տակ հասկացվում է մնացած բոլոր աշխատանքային ժամանակահատվածները,

III  նշանի տակ հասկացվում է անվանապես առկայության ժամանակահատվածը, սպասելու ժամանակը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում վարորդները պետք է մնան իրենց տեղերում զանգերի պատասխանելու համար, մեքենան վարելը սկսելու կամ ավարտելու, կամ այլ աշխատանք կատարելու համար,

վարորդի կողքին անցկացրած ժամանակը, երբ մեքենան գտնվում է ընթացքի մեջ,

ննջախցում անցկացրած ժամանակը, երբ մեքենան գտնվում է ընթացքի մեջ

IV  աշխատանքային ընդմիջումները և ամենօրյա հանգստի ժամանակահատվածները:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է թույլատրի վերոնշյալ II և III ենթակետերում նշված ժամանակահատվածների մասին իր տարածքում գրանցված մեքենաների կողմից օգտագործող գրառումների թերթիկների վրա կատարել համապատասխան գրառումներ՝ ըստ իրենց նշանների:

(բ) Հետագծերի բնութագրիչներից, դրանց հարաբերական դիրքից և անհրաժեշտության դեպքում նաև 4-րդ «ա» կետում նշված նշաններով պետք է հնարավոր լինի հստակ տարբերակել տարբեր ժամերի միջև ընկած ժամանակահատվածները:

Ժամերի տարբեր ժամանակահատվածները պետք է գրառումների վրա միմյանցից տարբերակվեն համապատասխան հետագծերի հաստությամբ, կամ ցանկացած այլ միջոցով, որը գրառման պարզության և մեկնաբանման տեսանկյունից կրում է միևնույն բնույթը:

(գ) այն դեպքում, երբ մեքենայի անձնակազմը բաղկացած է մեկից ավելի վարորդներից, 4-րդ (ա) կետով նախատեսված գրառումները պետք է կատարվեն առանձին թերթիկների վրա՝ յուրաքանչյուր թերթիկը հատկացնելով մեկ վարորդի:

Այս դեպքում առանձին թերթիկների առաջ շարժելը պետք է կատարվի կամ մեկ մեխանիզմի, կամ էլ առանձին համաժամանակյա մեխանիզմների միջոցով:

D Փակիչ սարք.

1. Գրառումների թերթիկը կամ թերթիկները պարունակող պատյանի և ժամացույցը գրոյական վիճակին բերելու մեխանիզմների համար պետք է հատկացվեն կողպեքներ:

2. Գրառումների թերթիկը կամ թերթիկները պարունակող պատյանի և ժամացույցը գրոյական վիճակին բերելու մեխանիզմների համար բացելու յուրաքանչյուր դեպքը պետք է ինքնաբերաբար գրանցվի թերթիկի կամ թերթիկների վրա:

E. Նշումներ

1. Հսկիչ սարքի գործիքի վերին մասում պետք է լինեն հետևյալ նշումները.

տարածության գրանցման թվի մոտ տարածության չափման միավորը՝
նշված «կմ» հապավումով,

արագությունների սանդղակի մոտ «կմ/ժ» հապավումով,

արագաչափի չափման տիրույթը հետևյալ ձևով. «Մին ... կմ/ժ, Մնաքս ... կմ/ժ». Այս նշումներն անհրաժեշտ չեն, եթե դրանք առկա են սարքավորման նկարագրման հարթակի վրա:

Այնուամենայնիվ, այս պահանջները չեն գործում մինչև 1970թ. օգոստոսի 10-ը հաստատված հսկիչ սարքերի համար:

2. Նկարագրման հարթակը պետք է կառուցված լինի սարքավորման մեջ և հսկիչ սարքի վրա տեղադրելիս տեսանելի ցույց տա հետևյալ նշանները.

սարքավորումն արտադրողի անունը և հասցեն,


արտադրողի համարը և կառուցման տարեթիվը,

հսկիչ սարքի տեսակի հաստատման նշանը,

սարքավորման հաստատունը հետևյալ ձևով « $k = \dots \text{rev/կմ}$ » կամ « $k = \dots \text{imp/կմ}$ »,

որպես այլընտրանք՝ արագության չափման տիրույթը 1-ին կետում նշված ձևով,

այն թույլատրելի անկյունը, որի տակ հնարավոր կլինի արդյունավետ կերպով կարդալ սարքի տված տեղեկությունները, նկարագրված են որպես



որտեղ β -ը այն անկյունն է, որը չափվել է սարքի դիմացից հորիզոնական դիրքում (հարմարեցված ճիշտ ձևով), որի համար չափվում է գործիքը, իսկ β -ն և γ -ը ներկայացնում են չափման անկյունից առավելագույն թույլատրելի վերև և ներքև թեքումները:

F. Առավելագույն թույլատրելի սահմաններ (Տեսողական և գրանցման սարքավորումներ)

1. Փորձարկման վայրում նախքան տեղադրումը.

(ա) անցած տարածությունը.

իրական տարածությունից 1% ավել կամ պակաս, երբ տարածությունը առնվազն 1 կմ է,

(բ) արագություն.

իրական արագությունից 3 կմ/ժ ավելի կամ պակաս,

(գ) ժամանակ.

օրական երկու րոպե, յոթ օրվա համար առավելագույնը 10 րոպե այն դեպքերում, երբ ժամանակացույցի աշխատելու ժամանակահատվածը հետ տալուց հետո այն այդ ժամանակահատվածից քիչ չէ:

2. Տեղադրում.

- (ա) անցած ճանապարհը,
իրական տարածությունից 2% ավելի կամ պակաս,
երբ հեռավորությունը կազմում է առնվազն 1 կիլոմետր:
- (բ) արագությունը.
իրական արագությունից 4 կմ/ժ ավել կամ պակաս,
- (գ) ժամանակը.
 - օրական երկու թույլ,
 - 10 թույլ յուրաքանչյուր յոթ օրը

3. օգտագործվում է.

(ա) ուղևորության տարածությունը.

իրական տարածությունից 4% ավելի կամ պակաս, երբ հեռավորությունը կազմում է առնվազն 1 կիլոմետր

(բ) արագությունը.

իրական արագությունից 6 կմ/ժ ավելի կամ պակաս,

(գ) ժամանակը.

- օրական երկու թույլ,
- 10 թույլ յուրաքանչյուր յոթ օրը:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված առավելագույն թույլատրելի սահմանները գործում են միայն ըստ Յելսիուսի 0-ից մինչև 40 աստիճանի դեպքում, երբ ջերմաստիճանը չափվում է սարքավորմանը շատ մոտ տարածքում:

5. 2-րդ և 3-րդ կետերում նշված առավելագույն թույլատրելի սահմանների չափումը կիրականացվի IV գլխում նշված պայմանների դեպքում:

IV. ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1. Գրանցման թերթիկները պետք է լինեն այնպիսին, որ չխոչընդոտեն սարքավորման նորմալ գործունեությանը, և դրանց մեջ պարունակվող գրանցումները կասկածի տեղիք չտան, լինեն հստակ և ճանաչելի:

Գրանցման թերթիկները պետք է լինեն իրենց չափսերով և պարունակեն ցանկացած գրառումներ, որոնք դրանց վրա կատարվել են խոնավության և ջերմաստիճանի նորմալ պայմաններում:

Ի լրումն այս ամենի, անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա գրանցման թերթիկների վրա լրացնել հետևյալ տեղեկատվությունը՝ առանց թերթիկները վնասելու և կատարված գրանցումների իսկությունը կասկածի տակ դնելու.

(ա) թերթիկի սկզբնամասում՝ իր ազգանունը և անունը,

(բ) թերթիկի օգտագործման սկսելու ամսաթիվը և վայրը՝ թերթիկի սկզբի մասում և օգտագործման ավարտի ամսաթիվը և վայրը՝ վերջում,

(գ) իրեն հանձնարարված մեքենայի պետհամարանիշը՝ գրանցելով այն թերթիկի վրա առաջին ուղևորության սկզբին, իսկ այնուհետև՝ մեքենայի փոփոխման դեպքում՝ թերթիկի օգտագործման ընթացքում,

(դ) կատարված վազքի ցուցիչի գրառումը.

թերթիկի վրա գրանցված առաջին ուղևորության սկզբին,

թերթիկի վրա գրանցված վերջին ուղևորության վերջում,

աշխատանքային օրվա ընթացքում մեքենայի փոփոխության դեպքում (իրեն հանձնարարված մեքենայի վրա կարդալով և իրենց հանձնարարվելիք մեքենայի վրա կարդալով),

(ե) մեքենայի ցանկացած փոփոխության ժամանակը:

Պահպանման նորմալ պայմաններում առնվազն մեկ տարի գրանցումները պետք է մնան հստակ ընթեռնելի:

2. Թերթիկների վրա կատարվող գրանցումների նվազագույն ծավալը պետք է լինի 4 ժամ՝ անկախ դրանց ձևից:

Եթե տարբեր սկավառակներ միմյանց հետ կապակցված են շարունական գրանցումների ծավալն ընդլայնելու նպատակով, որը կարող է ձեռք բերվել առանց անձնակազմի միջամտության, ապա տարբեր սկավառակների միջև կապակցումը պետք է այնպես կատարվի, որ մեկ սկավառակից մյուսին փոխանցվելիս գրանցումների մեջ տարանջատումներ և մասնակի խախտումներ տեղի չունենան:

Բ. Գրանցումների տիրույթները և դրանց մասնակիացումը /ամբողջականություն^{օօ}/

1. Գրանցման թերթիկները պետք է պարունակեն հետևյալ գրանցումների տիրույթները.

տիրույթ, որը բացառապես նախատեսված է արագությանը վերաբերող տվյալների համար,

տիրույթ, որը բացառապես նախատեսված է ուղևորության տարածությանը վերաբերող տվյալների համար,

մեկ կամ ավելի տիրույթներ վարման ժամանակին, այլ աշխատանքային ժամանակահատվածներին, աշխատանքային ընդմիջումներին և վարորդների հանգստի ժամերին վերաբերող տվյալների համար:

2. Արագության մասին գրանցումների տիրույթը պետք է հավասարաչափ բաժանված լինի յուրաքանչյուր ժամվա համար 20 կմ կամ քիչ բաժիններով: Բաժանումներում կատարված արագությանը համապատասխանող ցանկացած նշում պետք է նշման փոխարեն ցույց տրվի թվերով: «կմ/ժ» սիմվոլն առնվազն մեկ անգամ պետք է ցույց տրվի տիրույթում: Բաժանումների վերջին նշումը պետք է համապատասխանի չափման վերին շարքին:

3. Ուղևորություն կատարած/անցած տարածության մասին գրառումների տիրույթը պետք է այնպես կազմվի, որ ճանապարհորդած կիլոմետրերի քանակը կարդացվի առանց որևէ դժվարության:

4. 1-ին կետում նշված ժամանակահատվածների մասին գրանցումների համար վերապահված տիրույթը կամ տիրույթները պետք է այնպես նշվեն, որ հանարվոր լինի հստակ տարբերակել տարբեր ժամանակահատվածները:

Գ. Գրանցման թերթիկներում տպագրվելիք տեղեկատվությունը

Յուրաքանչյուր թերթիկ պետք է պարունակի հետևյալ տպագիր տեղեկատվությունը,

արտադրողի անվանումը և հասցեն կամ առևտրային անվանումը,

թերթիկի տիպային նմուշի հաստատման նշանը,

վերահսկիչ սարքերի տեսակի կամ տեսակների հաստատման նշանը, որում թերթիկը պետք է օգտագործվի,

արագության չափման տողի վերին մակարդակը՝ տպագրված կիլոմետր-ժամով:

Նվազագույն հավելյալ պահանջների միջոցով յուրաքանչյուր թերթիկում պետք է տպագրված լինի այնպես բաշխված ժամանակացույց, որ ժամանակը ուղղակիորեն կարդացվի 15 րոպեանոց դադարներով և յուրաքանչյուր 5 րոպեանոց դադար հնարավոր լինի որոշել առանց դժվարության:

Գ. Ազատ տարածություն ձեռագիր գրառումների համար

Թերթիկներում պետք է հատկացվեն այնպիսի ազատ տիրույթներ, որոնք վարորդներին հնարավորություն տան լրացնելու առնվազն հետևյալ տվյալները.

վարորդի ազգանունը և անունը,

թերթիկի օգտագործումը սկսելու, իսկ այնուհետև ավարտելու ամսաթիվը և վայրը,

մեքենայի կամ մեքենաների պետհամարանիշը կամ պետհամարանիշները, որին վարորդը հանձնարարված է/կցված է թերթիկի օգտագործման ընթացքում,

մեքենայի կամ մեքենաների կատարած վազքի ցուցիչի տվյալները, որին վարորդը հանձնարարված է թերթիկի օգտագործման ընթացքում,

մեքենայի ցանկացած փոխարինման ժամանակը:

V Հսկիչ սարքի տեղակայումը

Ա. Ընդհանուր կետեր

1. Հսկիչ սարքը մեքենայում պետք է տեղակայվի այնպես, որ վարորդն իր նստատեղից հստակ տեսնի արագության ցուցիչը, տարածությունը գրանցող սարքը և ժամացույցը՝ միևնույն ժամանակ այս սարքերի բոլոր մասերը, ներառյալ վարելու մասերը՝ ապահովելով դրանք պատահարային վնասումից:

2. Պետք է հնարավոր լինի ապահովել հսկիչ սարքի հաստատուն հարմարեցումը մեքենայի գործակցային բնութագրիչներին համապատասխան, որը կրում է հարմարեցուցիչ անվանումը:

3. Մեքենաները, որոնք ունեն երկու կամ ավելի կողային սռնիների հարաբերակցություն, պետք է միացնող սարքով հարմարեցվեն այն մասում, որտեղ այս տարբեր հարաբերակցությունները կարող են բերվել մեկ ուղղության վրա այնպիսի հարաբերակցությամբ, որի համար հսկիչ սարքը հարմարեցվել էր մեքենայի վրա:

4. Եթե հսկիչ սարքը ստուգվում է տեղակայվելիս, տեղադրման հարթակը պետք է մեքենայում հսկիչ սարքի մոտ կամ էլ հենց սարքի մեջ այնպես տեղադրվի, որպեսզի այն հստակ տեսանելի լինի: Հաստատված տեղադրողի կողմից ստուգումներ կատարվելիս կամ սարքի պարամետրերը արհեստանոցում փոփոխության ենթարկելու դեպքում նախկին հարթակի փոխարեն պետք է տեղադրվի նորը:

Հարթակի վրա պետք է երևան առնվազն հետևյալ տվյալները.

հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի անունը, հասցեն կամ առևտրային անունը,

մեքենայի բնութագրային գործակիցը, հետևյալ ձևով «w = ... rev/կմ» կամ «w = ... imp/կմ»

անվադողերի արդյունավետ ծածկույթը «i = մմ»

մեքենայի բնութագրիչների գործակցի և անվադողերի արդյունավետ ծածկույթի որոշման ամսաթվերը:

Բ. Կնիք դնելը

Հետևյալ մասերը պետք է կնքվեն.

(ա) տեղադրման հարթակը, եթե այն տեղադրված չէ այնպես, որ այն շարժելիս վրան կատարված նշումները խախտվեն,

(բ) հսկիչ սարքի հիմքի և մեքենայի կապակցման երկու ծայրերը,

(գ) հարմարեցուցիչը և դրա անցքի մեջ մտցվելու տեղը,

(դ) մեքենայի միացման մեխանիզմը՝ մեկ կամ ավելի սռնիների հարաբերակցությամբ,

(ե) հարմարեցուցիչը և միացման մեխանիզմը հսկիչ սարքի մնացած մասին միացնող կապակցման մասերը,

(զ) 3-րդ գլխի Ա 7 (բ) կետով նախատեսված մասերը:

Մասնակի դեպքերում կարող են պահանջվել հավելյալ կնիքներ. հսկիչ սարքի տեսակի հաստատման, և այս կնիքների տեղադրման մասին պետք է նշվի հաստատման հավաստագրի մեջ:

«բ», «գ» և «դ» կետերում նշված կնիքները կարող են խախտվել միայն արտակարգ իրավիճակներում և յուրաքանչյուր կնիքի նման խախտման դեպքում պետք է գրավոր բացատրվի այդ կերպ վարվելու պատճառները և ներկայացվի իրավասու մարմիններին:

VI. Ստուգումներ և ստուգայցեր

Պայմանավորվող կողմը պետք է նշանակի այն մարմիններին, որոնց կողմից պետք է իրականացվեն ստուգումները և զննումները:

1. Նոր կամ վերանորոգված գործիքների հավաստագրումը

Ցանկացած առանձին սարք, լինի դա նոր կամ վերանորոգված, պետք է հավաստագրվի համաձայն դրա պատշաճ կիրառման և կարդալու և գրանցումներ կատարելու կոկիկությամբ՝ 3-րդ գլխի Ջ 1 կետի սահմանափակումների շրջանակներում՝ կնքվելով համաձայն 5-րդ գլխի Բ գ կետի:

Այս նպատակներով Պայմանավորվող կողմը պետք է ամրագրի նախնական վավերացումը, որը բաղկացած է նոր կամ վերանորոգված սարքի համապատասխանության հաստատման ստուգումից տեսակը հաստատված նմուշի հետ և/կամ սույն լրացման և դրա հավելվածների պահանջների հետ, կամ կարող է հավաստման իրավունքը փոխանցվել արտադրողներին կամ նրանց լիազոր գործակալներին:

2. Տեղակայումը

Երբ տեղադրվում է մեքենայի վրա, հսկիչ սարքը և տեղակայման ողջ գործընթացը պետք է համապատասխանեն 3-րդ գլխի Ջ 2 կետում նշված առավելագույն թույլատրելի սահմաններին վերաբերող դրույթներին:

Ստուգման փորձարկումները պետք է իրականացվեն հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի կողմից՝ նրանց պատասխանատվությամբ:

3. Պարբերաբար անցկացվող ստուգումներ

(ա) Մեքենայի վրա հարմարեցված հսկիչ սարքի պարբերաբար ստուգումները պետք է անցկացվեն առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ և պետք է իրականացվեն համաձայն մեքենաների ճանապարհի համար պիտանիության փորձարկումների:

Այս ստուգայցերը պետք է ընդգրկեն հետևյալ ստուգումները.

որ հսկիչ սարքը ճիշտ է աշխատում,

որ հսկիչ սարքն կրում է տեսակի հաստատման նշանը,

որ տեղակայման հարթակը ֆիքսված է,

որ հսկիչ սարքի և տեղակայման այլ մասերում գտնվող կնիքները անխախտ վիճակում են,

անվադողերի իրական ծածկույթը:

(բ) Առավելագույն թույլատրելի սահմաններին վերաբերող 3-րդ գլխի Զ 3 կետում նշված դրույթներին համապատասխանեցումը վստահեցնելու նպատակով կատարվող ստուգայցը պետք է իրականացվի առնվազն վեց տարին մեկ անգամ, չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նման ստուգայցի համար կարող է ամրագրել ավելի կարճ ժամանակահատված՝ կախված իր տարածքում գրանցված մեքենաների յուրահատկություններից: Այսպիսի ստուգայցերը պետք է ներառեն տեղակայման հարթակների փոխարինումը:

4. Մխայների չափումը

Տեղակայման և օգտագործման ընթացքում սխալների չափումը պետք է իրականացվի հետևյալ պայմանների ներքո, որոնք պետք է համարվեն փորձարկումների պայմանների բաղկացուցիչ չափանիշներ.

չբեռնավորված մեքենան՝ նորմալ աշխատող վիճակում,

անվադողերի ճնշումը՝ համաձայն արտադրողի կողմից տրված հրահանգների,

անվադողերի ծածկույթը՝ համաձայն օրենքով թույլատրելի սահմանների,

մեքենայի շարժունակությունը. մեքենան պետք է ընթանա իր շարժիչի միջոցով ուղիղ գծով կայուն մակերևույթի վրա 50.5 կմ/ժ արագությամբ. համարելով, որ դա համեմատական ճշգրտություն է, փորձարկումը կարելի է իրականացնել նաև համապատասխան փորձարկման վայրում:

ԼՐԱՑՈՒՄ 2

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ

I. Հաստատման նշանը

1. Հաստատման նշանը պետք է բաղկացած լինի.

ուղղանկյունից, որի մեջ պետք է տեղադրված լինի «e» տառը, որին պետք է հաջորդի հաստատումը շնորհած երկրի տարբերակող թիվը՝ համաձայն հետևյալ պայմանական նշանների.

Գերմանիա	-	1	Ռումինիա	-	19
Ֆրանսիա	-	2	Լեհաստան	-	20
Իտալիա	-	3	Պորտուգալիա	-	21
Նիդեռլանդներ	-	1	Ռուսաստանի Դաշնություն	-	22
Շվեդիա	-	5	Հունաստան	-	23
Բելգիա	-	6	Իռլանդիա	-	24
Չեխիայի	-	8	Խորվաթիա	-	25
Հանրապետություն					
Իսպանիա	-	9	Սլովենիա	-	26
Հարավսլավիա	-	10	Սլովակիա	-	27
Մեծ Բրիտանիա	-	11	Բելառուս	-	28
Ավստրիա	-	12	Էստոնիա	-	29
Լյուքսեմբուրգ	-	13	Մոլդովայի	-	30
Հանրապետություն					
Նորվեգիա	-	14	Բոսնիա և Հերցեգովինա	-	31
Դանիա	-	15	Լատվիա	-	32

Համապատասխան թվեր պետք է վերագրվեն

- (i) 1958թ. Անվավոր փոխադրամիջոցների վրա հարմարեցվող և/կամ օգտագործվող անվավոր փոխադրամիջոցների, սարքերի և սարքավորումների համար միասնական տեխնիկական հրահանգների հաստատման և այդ հրահանգների հիման վրա փեխադարձ ճանաչման և հավանության պայմանների մասին համաձայնագրին անդամակցող պետություններին միևնույն թվերը, որոնք այդ պետություններին վերագրված են ըստ այդ համաձայնագրի,
- (ii) 1958թ. համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետություններին՝ ըստ սույն համաձայնագրի միացման կամ վավերացման ժամանակագրական կարգի,


և

հսկիչ սարքի կամ գրանցման թերթիկի նմուշի համար տրված հաստատման հավաստագրի համարին համապատասխան հաստատման համարը տեղադրվում է այս ուղղանկյան անմիջապես ներքևում:

Նշում. 1958թ. համաձայնագրի և AETR համաձայնագրի հիմնարար նիշերի համապատասխանությունը ապագայում ապահովելու նպատակով երկու պայմանագրերում էլ նոր Պայմանավորվող կողմերին պետք է հատկացվեն միևույն նիշը:

2. Հաստատման նիշը պետք է ցուցադրվի յուրաքանչյուր հսկիչ սարքավորումների խմբի նկարագրող հարթակի և յուրաքանչյուր գրանցման թերթիկի վրա: Այն պետք է լինի չջնջվող և միշտ պետք է հստակ լինի:

3. Ստորև նշված հաստատման նշանի չափսերը արտահայտված են միլիմետրերով և այս չափսերը նվազագույնն են: Այս չափսերի միջև պետք է պահպանվի հարաբերակցությունը:



(1) Այս պատկերը ցույց է տրված որպես օրինակ

II. ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Հաստատում շնորհած Պայմանավորվող կողմը պետք է դիմորդին տա հաստատման հավաստագիր, որի ձևը ներկայացված է ստորև: Երբ մյուս

Պայմանավորվող կողմերին տեղեկացվում է տրված հաստատումների կամ դրանց մերժման մասին, ապա Պայմանավորվող կողմը պետք է օգտագործի այդ հավաստագրի պատճենները:

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Իրավասու վարչակազմի անունը

Նշումներ, որոնք վերաբերում են.*

հսկիչ սարքի տեսակի հաստատմանը

հսկիչ սարքի տեսակի հաստատումը մերժելուն

գրառումների թերթիկի տիպային նմուշի հաստատմանը

գրառումների թերթիկի տիպային նմուշի հաստատումը մերժելուն

Հաստատում No

1. Ապրանքանիշը կամ անունը
 2. Տիպային նմուշի անունը
 3. Արտադրողի անունը
 4. Արտադրողի հասցեն
 -
 5. Երբ է հանձնվել հաստատման համար
 6. Որտեղ է փորձարկվել
 7. Փորձարկման մասին զեկուցագրի ամսաթիվը և համարը
 8. Հաստատման ամսաթիվը
 9. Հաստատման մերժման ամսաթիվը
 10. Հսկիչ սարքի տեսակը կամ տեսակները, որում նախատեսվում են օգտագործելու թերթիկները
 11. Վայրը
 12. Ամսաթիվը
 13. Կցված նկարագրող փաստաթղթերը
 -
 14. Նշումներ
 -
- (Ստորագրություն)

* ջնջված պարագաները չեն կիրառվում

ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին Եվրոպական համաձայնագիր ստորագրելով՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, համաձայնեցին հետևյալում.

Համաձայնվող կողմերը հայտարարում են, որ սույն պայմանագիրը չի վնասում այնպիսի պայմանները, եթե այդպիսիք առկա են, որի հետևանքում կարող են կազմվել աշխատանքների տևողության և տարածման հարցում:

Հայտարարություն համաձայնագրի 4-րդ կետի վերաբերյալ

4-րդ կետի առաջին պարբերության պայմանները չպետք է մեկնաբանվեն որպես կիրառելի այն երկրից դուրս, որտեղ տրանսպորտային գործողություն կատարող փոխադրամիջոցը գրանցված է, և որևէ արգելք չեն հանդիսանում տվյալ երկրում որոշակի օրերին կամ որոշակի ժամերին փոխադրամիջոցների որևէ տեսակի երթևեկության համար: 4-րդ կետի երկրորդ պարբերության պայմանները չպետք է մեկնաբանվեն որպես խոչընդոտող հանգամանք Համաձայնվող կողմերի համար՝ կիրառելու իրենց տարածքում տեղական օրենքների և կանոնների պայմանները, որոնք խոչընդոտում են երթևեկության փոխադրամիջոցների որոշակի տեսակներին որոշակի օրերին կամ որոշակի ժամերին:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը, լինելով հատուկ պայմանագրի կողմ, ինչպես նշված է այս համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, նշանակում է միջազգային տրանսպորտային գործառնությունների սկիզբը և վերջը հատուկ համաձայնագրում նշված Կողմերի տարածքներում այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք գրանցված են այն երկրի տարածքում, որը, լինելով սույն համաձայնագրի Պայմանավորվող կողմ, չի հանդիսանում նշված հատուկ պայմանագրի Կողմ, կարող է այդ հանգամանքը որպես պայման դնել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի կնքման համար, որոնք իրավասություն են տալիս այնպիսի տրանսպորտային գործողություններին, որոնք իրականացնող անձնակազմը կկատարի նշված հատուկ պայմանագրի պայմանները հատուկ պայմանագրում նշված կողմերի երկրների տարածքներում:

Հայտարարություն համաձայնագրի 12-րդ կետի վերաբերյալ

Ներքոստորագրյալները պարտավորվում են պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո բարելավման միջոցով քննարկել զետեղված հավելվածի այն կետը,

որը ապահովում է ընդունված տեսակի ղեկավարման մեխանիզմի օգտագործումը, որը փոխադրամիջոցի վրա տեղադրելիս որքանով հնարավոր կլինի փոխարինել անհատական ղեկավարման գրքույկով:

Հայտարարություն համաձայնագրի 14-րդ կետի վերաբերյալ

Պայմանավորվող կողմերը ընդունում են, որ ցանկալի կլինի՝

- յուրաքանչյուր կողմ այնպիսի միջոցներ ձեռնարկի, որոնք հնարավորություն տան համաձայնագրի պայմանները խախտվելու դեպքում գործի դնելու ընթացակարգը, ոչ միայն այն դեպքում, երբ խախտումները կատարվել են իր տարածքում, այլ նաև այլ երկրի տարածքում այն ժամանակահատվածում, երբ Պայմանավորվող կողմից գրանցված փոխադրամիջոցով կատարվել են միջազգային ճանապարհատրանսպորտային գործողություններ.
- միմյանց օգնել կատարված խախտումների համար բավական մեծ տուգանքներ նշանակելու նպատակով:

Հայտարարություն համաձայնագրի հավելվածի վերաբերյալ

Չնայած սույն Համաձայնագրի լրացման ընդհանուր դրույթների 4-րդ կետի պահանջներին՝ Շվեյցարիան կարող է անտեսել այն պահանջը, ըստ որի գործատուն պետք է անձնական վերահսկման գրքում ստորագրի շաբաթական զեկույցը:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ, պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է Ժնևում հազար ինը հարյուր յոթանասուն թվականի հուլիսի մեկին միակ բնօրինակով, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են: